Ներկայ կառավարութիւնը բնութեան բաժանման համեմատ այլ և այլ վիճակներու բաժանած է. թէև կերևի պատմութենէն՝ որ մեր նախնիք ևս այդ բաժանումներն ունէին, բայց ունէին յարաբերութիւն միմեանց հետ և որոց ապացոյցներն կերևին այս օր։

Պատմագիրներն շատ անգամ փոխանակ Բաղրեւանդ գրելու՝ ամբողջ վիճակն Ալաշկերտ գրած են, որով կերևի թէ երբեմն Ալաշկերտ ասուած է այն վայրը, որ այս օր չորս գաւառներու բաժանուած է, 1. Դիատին, 2. Գարա-քիլիսէ, 3. Անդափ և 4. Ալաշկերտ որ մէկ մէկ գայմագամ կը կառավարեն։

Իսկ այս օր «Ալաշկերտցի եմ» ասող ժողովուրդն՝ միայն Բաղրեւանդայ արևմտեան բաժանման այսինքն Ալաշկերտի և Գարա-քիլիսէի ժողովուրդն է, և երբեմն Անդափի ժողովուրդն ուր ևս հայ չը գտնուիր, բացի քանի տուն եկեղեցիներէ։

Անդափ և Ալատաղ (Ծաղկաց լ.) մեզմէ բաժանած են Շեռեան և Մուրատ. Գարա-քիլիսէն ևս բաժանած է Դաշլի գետ։

Հայ գիւղերն Ալաշկերտի դաշտի եզերքներուն վերայ տարածուած են և զրեթէ ամենն ևս ունին բնական բաժանում. ընկած են երկու ջրոց մէջ, իւրաքանչիւր հայ գիւղի բարձունքը լեռնային մասերու մէջ տարածուած կան քրդ. գիւղեր, որք ևս այդ բնական բաժանման մէջ կը գտնուին և որք միևնոյն կառավարութիւններու կը պատկանին։

Կը մնայ այժմեան Ալաշկերտի գայմագամութիւնը. սորա այլ և այլ բաժանմանց վերայ կսկսիմ ընդարձակ խօսիլ։

1. Բերդ (Թօփրագալէ) և բերդի թև. որ կը տարածուի մինչև Շահկոլ լեռներու գագաթն։